ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՆ ԱՋԱԿՑՈՒՄ Է «ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱՅԻ ՔՈՒՅՐԵՐ» ՄԱՆԿԱՏԱՆ ՍԱՆԵՐԻՆ

24.12.2020 17:01

ՀՀ փաստաբանների պալատը՝ տարիներ շարունակ ձևավորված ավանդույթի համաձայն, իրականացնում է **Երևանում «Մայր Թերեզայի քույրեր» միսիոներների բարեգործական կազմակերպության մանկատանն աջակցության բարեգործական նախաձեռնությունը**, որի շրջանակներում փաստաբանները և ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմն Ամանորի և Սուրբ Ծնունդյան տոների կապակցությամբ այցելում են մանկատուն և որպես մանկատան երեխաներին օժանդակություն հանձնում են մանկատան ներկայացուցիչների հետ նախապես համաձայնեցված անհրաժեշտ պարագաները:

«Մայր Թերեզայի քույրեր» միսիոներների բարեգործական կազմակերպության մանկատան խնամքի տակ են գտնվում ծանր հիվանդություն ունեցող այն երեխաները, որոնցից ծնողները հրաժարվել են:

Այս տարի նույնպես ՀՀ փաստաբանների պալատն իրականացրել է նշված նախաձեռնությունը: Համավարակով պայմանավորված 2020թ. դեկտեմբերի 24-ին մանկատուն է այցելել միայն ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ներկայացուցիչը, ով փաստաբանների անունից երեխաներին է փոխանցել հավաքագրված օժանդակությունը՝ քաղցրավենիք, խաղալիքներ, մանկական սնունդ, մանկական հիգիենիկ պարագաներ:

ՀՀ փաստաբանների պալատը շնորհակալություն է հայտնում բոլոր այն փաստաբաններին, ովքեր միացել են նախաձեռնությանը և իրենց ներդրումն են ունեցել (դրամական կամ անհրաժեշտ պարագաներով) մանկատան երեխաներին տրամադրված օժանդակության հարցում:

ՀՀ փաստաբանների պալատի
աշխատակազմ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })